

«ԿՈՆՍՈՑԻԱՏԻՎ՝ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԲԱԶՄԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՈՒԹՅՈՒՆԵՐՈՒՄ

Հայկ Սուրիայան
Քաղաքական զիտությունների թեկնածու, դրցենտ
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի ակադ զիտաշխատող

Ժամանակակից հասարակությունների, այդ թվում՝ հետխորհրդային, մեծ մասը, բազմական հասարակություններ են, որոնց բնութագրական են «հասվածական տարբերություններ»։ Այդ տարբերությունները կարող են ունենալ կրոնական, գաղափարական, լեզվական, տարածաշրջանային, ռասայական կամ էթնիկական ծագում։ Բնակչության խմբերը, որոնք առանձնացվում են այդ տարբերությունների հիման վրա, համարվում են բազմական հասարակության հատվածներ։ Նման հասարակության համար հատկանշական խնդիր է քաղաքական կայունության և հասարակության տարբեր հատվածների միջև հավասարակշռության ապահովումը։ Հավասարակշռության խախտումը որևէ էթնիկ խմբի օգտին անխուսափելիորեն հանգեցնում է էթնոկրատիայի, այսինքն՝ մի էթնիկ խմբի գերիշխանության հաստատման մյուս էթնիկ խմբերի նկատմամբ դրանից բխող բոլոր հետևանքներով¹։

Հայտնի է բազմական հասարակություններում քաղաքական կայունության և հասարակության տարբեր հատվածների միջև հավասարակշռության պահպանման երկու հնարավորություն։ Մեկը ֆեդերալիզմն է, մյուսը՝ Ա. Լեյփհարթի առաջարկած «կոնսոցիատիվ ժողովրդավարությունը»։ Բազմական հասարակություններում, կարծես թե, ժողովրդավարական վարչակարգին այլընտրանք չկա:

• «Կոնսոցիատիվ» (հայերեն բարգմանաւորյունը կարող է լինել հետևյալը՝ համահասարակական կամ ընկերակցային՝ (ընկերակցային եղրույթի վերաբերյալ տես Շիրինյան Լ. Ընկերակցային (Consociational) ժողովրդավարության այրելովկայացած տրենորը։ Կոնսոցիատիվ ժողովրդավարությունի։ Քաղաքական կազմաբանությունը և իրացման ներուժը։ Եր., Լիմուշ, 2017, էջ 6-14)) եղրույթը (անգլ. consociational) ձևավորվել է Ինհաննես Ալտուգիուսի "Politica Methodice Digesta" (1603) գրքում ներկայացված "consociatio" հասկացությունից։ (Լեյփհարթ Ա. Многосоставные общества и демократические режимы).

¹ Սուրիայան Հ. Արենդ Լեյփհարթի «Կոնսոցիատիվ ժողովրդավարությունը»։ Պատմություն և Հասարակագիտություն, Տարեգիրք N1, Հայկարդիկ տպարան, Եր., 2015, էջ 268-285։

Ծողովրդավարական վարչակարգերի բազմազանության մեջ առանձնացնենք երկու հիմնական խումբ՝ մեծամասնական կամ վեստմինստերյան ժողովրդավարություն (westminster democracy) և կոնսոցիատիվ ժողովրդավարություն (consociational democracy): Այս տեսակի ժողովրդավարությունների միջև տարբերությունը հիմնականում պայմանավորված է այն սոցիալական միջավայրով, որտեղ նրանք գործում են: Մեծամասնական ժողովրդավարությունն արդյունավետ է միատարր հասարակության մեջ, իսկ կոնսոցիատիվ ժողովրդավարությունը՝ «բազմական հասարակությունում»²: Չնայած հարկ է նշել, որ միատարր հասարակություններում ևս կոնսոցիատիվ ժողովրդավարությունը կարող է կիրառվել:

Հանդես գալով այն մեկնակետից, որ ՀՀ-ն մոնութենիկ պետություն է առանց հատվածական տարբերությունների, ներհայաստանյան պրակտիկայի իմաստով կոնսոցիատիվ սեգմենտների հարցադրումները որոշ չափով փոխակերպվում են և ստանում ավտոնոմ բովանդակություն: Խոսքը հասարակության տարբեր ստրատաներով (ստրատա սոցիալական կառուցվածքի տարր, որը ստեղծված է բազմաշափ դասակարգման հիմքի վրա և կազմակերպված է ստրակարգության ձևով) իշխանության մեջ ներկայացվածություն և պատասխանատվություն ունենալու մասին է (օրինակ՝ Ավստրիայի Դաշնային Հանրապետություն, որտեղ բնակչության մեծ մասը գերմանացիներ են, իսկ նրանց դավանանքը՝ 97% կաթոլիկներ): Այսպիսի հասարակությունն ավելի անվտանգ է, կայուն և կանխատեսելի:

Ինչեւ, անդրադառնանը բազմական հասարակություններին:

Աշխարհում դժվար է գտնել ամբողջապես հոմոգեն պետություններ. զրեթե բոլոր երկրներում կ կան որոշակի առանձնացված խմբեր: Սակայն մենք կարող ենք խոսել պետության հատվածականության, նրա բազմականության մասին այն դեպքում, եթե տվյալ հասարակության մեջ առկա խմբերը, հատվածներն ունեն կամ ձեռք են բերում քաղաքական բնույթ³:

Բազմական հասարակությունում տարանջատված հատվածների առկայությունը սահմանափակում է մեծամասնական

² Рагозин Н., Очерки современной демократии. Украинские проблемы в контексте международного опыта. Донецк, издательство "Донбасс", 2003, с. 86.

³ Ормонбеков Ж., Теория конссоционализма Аренда Лейпхарта. /Журнал «Казанский федералист» / 2007 / Номер 1-2 (21-22), зима-весна, 2007 / II. Теоретические вопросы в исследованиях мультикультурных сообществ.

<http://www.kazanfed.ru/publications/kazanfederalist/n21-22/9/ /15.05.2015/>.

ժողովրդավարության ընթացակարգերի և ինստիտուտների կիրառումը: Մեծամասնական կամ վեստիլիստերյան ժողովրդավարությունը հիմնվում է քաղաքական էլիտաների միջև մրցակցության, «մեկ մարդ-մեկ ձայն» սկզբունքի վրա, դավանում է, այսպես ասած, «հաղթողը ստանում է ամենը» սկզբունքը (ինչպես, մինչև հաջորդ ընտրությունները) և գործում է «իշխող կուսակցություն-քաղաքական ընդիմություն» մրցակցային մոդելով: Այդ սկզբունքները բազմական, հատկապես՝ բազմաէթնիկ հասարակության համար կիրառելիս անխուսափելիորեն կիանգեցնեն հասարակության ամենամեծ հատվածի (սեզմենտի) քաղաքական գերիշխանությանը մյուս բոլոր հատվածների նկատմամբ, կիանգեցնեն քաղաքական ճգնաժամի և կոնֆլիկտների⁴: Են իսկ կոնստրուկտիվության խմատը կոնֆլիկտների լուծումն է և իսկական ժողովրդավարության որոնումը⁵: Բազմական հասարակությունները, որոնք փնտրում են կայուն ժողովրդավարություն և կայուն քաղաքական համակարգ, պետք է դիմեն կոնստրուկտիվ ժողովրդավարությանը:

Բազմական հասարակություններում ավելի արդյունավետ են այն ռազմավարությունները, որոնք ապահովում են եթիկ խմբերի քաղաքական իշխանության հավասարակշուրթյունը և կանխում են դրանցից որևէ մեկի միակողմանի տիրապետությունը⁶:

Կոնստրուկտիվ ժողովրդավարությունն այս համատեքստում դիտվում է որպես տարբեր հանրույթների շահերի և պահանջմունքերի հաշտեցման միջոց՝ պահպանելով քաղաքական կայունությունը ժողովրդավարության շրջանակներում:

Ոչ ժողովրդավարական վարչակարգերը շրարձան ազգերի հմտությունները և չկարողացան պահպանել պատշաճ կարգ ու կանոն հատվածների միջև հարաբերություններում և ապահովել խաղաղություն բազմական հասարակություններում⁷:

Այս առումով՝ հետաքրքրական է Հարավային Կովկասի որոշ հանրապետությունների փորձը, օրինակ՝ Վրաստան, Ադրբեյչանի

⁴ Рагозин Н., Очерки современной демократии. Украинские проблемы в контексте международного опыта. Донецк, издательство "Донбасс", 2003, с. 88.

⁵ Noble Ellen L., A Field Study of Consociationalism in the Northern Ireland Assembly: A Moderating Influence or Threat to Democracy?" 2011., Independent Study Project (ISP) Collection. Paper 1219, 40 p. http://digitalcollections.sit.edu/isp_collection/1219 /11.05.2015/

⁶ Осипов А., Сообщественная демократия как фактор консолидации политической власти. Гуманитарные и социальные науки 2010. № 4, с. 249., http://hses-online.ru/2010/04/23_00_02/28.pdf /15.05.22/

⁷ Лейпхарт А., Со-общественное конструирование, «Полис», 1992, №4, с. 135-143.

Համբավետություն, որտեղ տեղի չունեցավ քաղաքացիների կոնսոլիդացիա ընդհանուր արժեքների հիման վրա, ինչն էլ իր հերթին առանձին դեպքերում հանգեցրեց բռնությունների, լեզվափոխան ճգնաժամի և երկրի պառակտման: Որոշ երկրներում այս ամենին նպաստել է ոչ միայն հասարակության մշակութային-արժեքային պառակտվածությունը, այլև սոցիալական, էթնոքաղաքական, լեզվական բաժանումները⁸:

Այս համատեքստում դիտարկենք իրավիճակը Վրաստանում և Ադրբեյջանում:

Վրաստան

Սովետական միության վիլուգումից հետո վորքամանություններն անկախության շրջանի վորքիտությունների ընթացքում մնացին մեն մենակ մեծամասնության առօն և պարտություն կրեցին: Նրանք նաև կարծեն «վրայացին» միջազգային հանրության ուշադրությունից, դեռ իսկ Վրաստանի և Ադրբեյջանի իշխանություններին ձեռնորոշ չեղ միջազգային ներգրավվածությունը՝ էթնիկական պահանջների ամրապնդման վախից ենելով⁹: Հիմնախնդիրն իր առանձնահատուկ դրսւորումը գուակ շրացած ԽՍՀՄ ազդեցության գոտում և նրա նախկին տարածքում, որ հիմնականում նախկին Ռուսական կայսրության տարածման վիրթարի շրջանն է: Տվյալ առանձնահատկությունը պայմանավորվեց մեծ չափով Արևմուտքի կողմանակալ և «տարօրինակ» վարքագծով. Արևմուտքն իր դավանած արժեքների համակարգից ժողովուրդների ինքնորոշման իրավունքը կիրառելի (հետևապես՝ լեզվիմ) նախկին միութենական հանրապետությունների (և ո՞չ ժողովուրդների), այդ թվում՝ ազգային պետությունների քողի տակ էթնուկրատիա ստեղծող զամանակայսրությունների (Ադրբեյջան, Վրաստան և այլն) հանդեպ, մերժեց բարի բուն իմաստով գոյապայքար մղող ավտոխոտն (անորենածին) ժողովուրդներին (հայությանը Արցախում, լեզգիներին, թալիշներին, արխազներին, օսերին և ուրիշների), ինչը վկայությունն էր ու արտահայտությունը «հին ու բարի ժամանակների» գաղրութարարության և դասական իմպերիալիզմի: Բնական էր հիշալ և այլ ժողովուրդների ահութի

⁸ Борисов Н., Легитимность власти в многосоставных обществах: проблема ее оснований, формирования и разрушения (на примере Кыргызстана).

<http://cyberleninka.ru/article/n/legitimnost-vlasti-v-mnogosostavnykh-obschestvah-problema-eyo-osnovaniy-formirovaniya-i-razrusheniya-na-primerre-kyrgyzstana/07.05.2014/>.

⁹ Matveeva A., The South Caucasus: Nationalism, Conflict and Minorities, MRG Report (Minority Rights Group International), London, 2002, p. 27.

հիասքափությունը, կոնկրետ, Արևմուտքից և թերևս նրա գովազդած արժեքներից: Քանզի նույն Արևմուտքը կամա-ակամա կլեց իր կողմից արհամարհված և տասնամյակներով անարդար դիտված «չարիքի կայրության» մտահղացումների խայծը¹⁰:

Վրաստանը մինչ այսօր ոչինչ չի անում ուղղված երկրում սեզմենտներին օգնելու քաղաքականությանը: Միաժամանակ Վրաստանը շատ թույլ է ասիմիլյացիոն քաղաքականություն իրականացնելու համար: Հավասարակշռությունը, կարող է խախտվել, իսկ միջազգային աջակցությունը պակասել, և այս դեպքում վրացական պետության կենտրոնակությունը կհայտնվի լրջազգություն վառապահ տակ. ինչին ականատես եղանք 2008 թվականի ոռու-վրացական պատերազմի ժամանակ:

Այսօր արդեն որոշ սեզմենտներ կարողացել են ձեռք բերել փաստացի ինքնավարություն¹¹, դե իսկ որոշներն ել 2008 թվականի ոռու-վրացական պատերազմից հետո ընդհանրապես դուրս եկան Վրաստանի կազմից: Վրաստանի ներքին անկայունության հիմքը, ըստ՝ Ն. Սարանաձեի, պետք է փնտրել թույլ պետականության և էթնիկ ժողովրդավարության համադրության մեջ¹²:

Սակայն, այնուամենայնիվ, ոչ Վրաստանում, ոչ էլ Ադրբեջանական Հանրապետությունում որևէ ցանկություն չկա սեզմենտների հետ հարաբերությունների կարգավորման¹³: Հենց այս պատճառով էլ սրանք վերածվում են զամանակակից կայսրությունների¹⁴:

Իրենց եվրոպական արժեքների մոլեուանդ հետևորդներ հոչակած զամանակակից կայսրությունների «ընտրախավ» անհանդուրժողականության, մեծապետական շովինիզմի և կայսերական հավակնությունների հետևանքով այսօր տարածաշրջանը տարանջատված է և ապահամարկված (“dezintegրirovaniyem”), դարձել է անկայունության առյուղը, որի թունավոր սլաքներն ուղղված են բոլոր ազիմուտներով:

¹⁰ Շիրինյան Լ., Հարավային Կովկաս. Եվրամիության պրոյեկցիան (Այսրկովկասի համայնք անվտանգության տեսանկյունը): Սանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ: Եր., Զանգակ, N1, 2012, էջ 144-152:

¹¹ Sabanadze N., Georgia's Ethnic Democracy: Source of Instability. The Fate of Ethnic Democracy in Post-Communist Europe. ECMI, 2005, p. 115-137.

¹² Նույն տեղում:

¹³ Matveeva A., The South Caucasus: Nationalism, Conflict and Minorities, MRG Report (Minority Rights Group International), London, 2002, p. 27.

¹⁴ Շիրինյան Լ., Հարավային Կովկաս. Եվրամիության պրոյեկցիան (Այսրկովկասի համայնք անվտանգության տեսանկյունը): Սանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ: Եր., Զանգակ, N1, 2012, էջ 144-152:

Գաճաճ կայսրությունները կփորձեն էթնիկական գոռում անցկացնել և վերացնել ազատազրվող ժողովուրդների ինքնիշխանության ամեն հետք, որը կհանգեցնի, ի վերջո, ցեղասպանության, կամ «մարդասիրական աղետի» կանխման համար անհրաժեշտ կլինի կիրառել «մարդասիրական ներխուժում» (օրինակ, 2008 թվականի վրացական բիցկրիզն ու ոռւսական «գործողությունները»)¹⁵:

Վրաստանում խոշոր հայկական համայնքը 1989 թվականին հասնում էր 437 200 (Վրաստանի բնակչության 8,1 %), որոնք ապրում էին հատկապես մայրաքաղաք Թիֆլիսում և Զավախիրի շրջանում: Զավախիրում հայերը կազմում են բնակչության 95%-ը¹⁶:

Գաճաճ կայսրություններում իրենց ազգային տարածքներում հավաք (կոմպակտ) ապրող հայերի, լեզգիների, քայլշների (և ուրիշների) արտամղումը կամ մշակութային ձուլումը կանխելու, տարածաշրջանի մշակութային բազմականությունը պահպանելու հրամայականով անհրաժեշտ է կոնսոցիատիվ ժողովրդավարության չորս հիմնական սկզբունքների կիրառումը:

Աղբբեջան

Նախիջևանի խնամակալության ինքնիշխանությունը հինավորց հայկական այս Բիբիխական նահանգը, Ռուսական կայսրության «Հայկական մարզի» այս գավառը խորհրդային առաջին տարիներին վերածվեց օսմանյան և աղբբեջանական թուրքերին իրար կամրջող համաթուրանական օղակի, որի նկատմամբ ծնվող Աղբբեջանի թուրքական պետության հավակնությունն առաջին անգամ հնչեց Բաթումի կոնֆերանսում, 1918 թվականի մայիսի 20-ին, երբ Մահմեդական ազգային խորհրդի անդամ Ռուսութելովլը պահանջեց Նախիջևանը հանձնել Աղբբեջանին «Թուրքիայի հետ մշտական անմիջական կապ հաստատելու համար»: Այնուեւուն, թուրքական ռազմաքաղաքական ականդրսյան բնորոշ հետևողականությամբ (Ալեքսանդրապոլի դաշնագիր, հոդված 2, Սուլկվայի դաշնագիր, հոդված 3, Կարսի դաշնագիր, հոդված 5) Հայաստանի Հանրապետության անկապտեի մասը կազմող Նախիջևանի շրջանը վերածվեց թուրքական Աղբբեջանի խնամակալության (պրոտեկտորատի) Ռուսաստանի բոլշևիկների գործուն օժանդակությամբ: Խորհրդային տարիները

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Sabanadze N., Georgia's Ethnic Democracy: Source of Instability. The Fate of Ethnic Democracy in Post-Communist Europe. ECMI, 2005, p. 115-137.

անդրենածին ժողովրդից մաքրագործված խնամակալությունը դարձրին Աղբեջանի մաս՝ խախտելով Մոսկվայի և Կարսի տիրահոչակ պայմանագրերի հրամայական (իմպերատիվ) պահանջը¹⁷:

Աղբեջանն այսօր իրեն հոշակելով ունիտար (միատարր) պետություն լուծված է դիտում իր տնօրինությանը հանձնված խնամակալության կարգավիճակի հարցը: Աղբեջանին պետք է պարտադրել միջազգային իրավունքի պահանջները¹⁸ և կոնսուժատիվ ժողովրդավարությունը: Բազմական հասարակություններում ավելի արդյունավետ են այն ռազմավարությունները, որոնք ապահովում են երեխի խմբերի քաղաքական իշխանության հավասարակշռությունը և կանխում են դրանցից որևէ մեկի միակողմանի տիրապետությունը¹⁹:

Մեկ բան ակնհայտ է. բազմական հասարակությունները, իսկ Ս. Հանրինգթոնն այդպիսի հասարակություններն անվանում է ճաքած հասարակություններ²⁰, հնարավոր չէ միավորել ազգայնական գաղափարախոսության միջոցով, առավել ևս ժողովրդավարական ընթացակարգերի նկատմամբ հավասի միջոցով, եթե փաստացի քաղաքական պրակտիկայում իշխանության ներկայացուցական մարմիններում հասարակության տարբեր հատվածների հասանելիությունն ամբողջությամբ արգելափակված է կամ սահմանափակված: Ազգայնական ուղղաձնություն ունեցող կուսակցությունները չեն կարող դիմադրել այն մարտահրավերիներին, որոնք կանգնած են բազմական հասարակությունների առջև: Իհարկե, բազմական հասարակություններում ազգայնական ուժերը կպնդեն վեստմինստերիան ժողովրդավարության օգտին, քանի որ դա բխում է իրենց շահերից: Ըստ որում՝ նրանք կարող են նաև լավագույնս իրականացնել վետմինստերիան ժողովրդավարության, այսինքն՝ մեծամասնության իշխանության բոլոր սկզբունքները ժողովրդավար երևալու համար: Սակայն արդյո ք դա բավարար է խսկական ժողովրդավարություն կոչվելու

¹⁷ Շիրինյան Լ., Հարավային Կովկաս. Եվրամիության պրոյեկցիան (Այսրկովկասի համալիր աևլուանգության տեսանկյունը): Մանկավարժության և հոգեբանության հիմնանշերներ: Եր., Զանգակ, N1, 2012, էջ 144-152:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Осипов А., Сообщественная демократия как фактор консолидации политической власти. Гуманитарные и социальные науки, 2010. № 4, с. 249.

[http://hses-online.ru/2010/04/23_00_02/28.pdf /15.05.22.](http://hses-online.ru/2010/04/23_00_02/28.pdf)

²⁰ Huntington S., The Clash of Civilizations and the Remaking of World Order. N.Y., Simon & Schuster, 1998, 367 p.

համար: Սունկերնիկ հասարակություններում, միզուցե, այդ: Բազմական հասարակություններում՝ ո՞չ:

Ի սկզբանե ստեղծված լինելով որպես ժողովրդավարության մողել՝ որպես ժողովրդավարական վարչակարգի տեսակ՝ կոնսոցիատիվությունը ձևափոխման արդյունքում վերածվել է ներքին քաղաքական կոնֆլիկտների և տարածայնությունների լուծման պրակտիկ կիրառության մեթոդի: Այսօր կոնսոցիատիվությունն ավելի շուտ ոչ թե պետական կառուցվածքի կամ նույնիսկ կառավարման ձև է, այլ որոշումների ընդունման գործընթացում կոնֆլիկտներից խուսափելու մեթոդների, գործիքների շարք, հավաքականություն: Կոնսոցիատիվ ժողովրդավարության անփոփոխ նպատակը ներքին քաղաքական կայունության հաստատումն ու պահպանումն է²¹:

Հարավային Կովկասի քաղմական հասարակություններում միակենտրոն իշխանությունն ամենին է կայուն չե, հետևաբար, նաև գործառնապես անվիտան: Նմանատիպ երկրներում ազգային միասնության կարելի է հասնել ոչ թե էրնիկ, մշակութային տարբերությունների վերացման միջոցով (ինչը ճարած հասարակություններում գործե անհնար է), այլ քաղաքական համակարգում այդ տարբերությունների ֆորմալ և ոչ ֆորմալ մակարդակներում ինստիտուցիոնալացման միջոցով²²:

Ըստ Էռլյան՝ այս երկրների մեծ մասում ձեավորվել է անջրպես ժողովրդավարական հոետորաբանության և ավտորիստար պրակտիկայի միջև: Ամեն կերպ հետաձգվող էրնոքաղաքական հակամարտությունները խոշնդրությում են փոխակերպվող հասարակության իշխանական կոնսոլիդացիան: Քաղաքական իշխանության ապակոնսոլիդացիայի մասին վկայում են հասարակության էրնիկ խմբերի միջև հակամարտությունները, պայքարը, որոնց մեջ ներգրավվում է նաև պետությունը²³:

²¹ Ормонбеков Ж., Теория конссоционализма Аренда Лейпхарта. /Журнал «Казанский федералист» / 2007 / Номер 1-2 (21-22), зима-весна, 2007 / II. Теоретические вопросы в исследований мультикультурных сообществ.

<http://www.kazanfed.ru/publications/kazanfederalist/n21-22/9//15.05.2015/>.

²² Борисов Н., Легитимность власти в многосоставных обществах: проблема её оснований, формирования и разрушения (на примере Кыргызстана).

<http://cyberleninka.ru/article/n/legitimnost-vlasti-v-mnogosostavnyih-obschestvah-problema-evo-osnovaniy-formirovaniya-i-ratzusheniya-na-primeere-kirgizstana/07.05.2014/>.

²³ Осипов А., Сообщественная демократия как фактор консолидации политической власти. Гуманитарные и социальные науки 2010. № 4, с. 249.

http://hses-online.ru/2010/04/23_00_02/28.pdf /15.05.22/.

Փոխակերպվող հասարակությունների կառավարությունների համար, որոնք գործում են ձգձգված (հետաձգված) հակամարտությունների առկայության կամ դրա վտանգի պայմաններում, ինչդիր լրտեման համար առավել արդյունավետ միջոցը կոնսուժիատիվ ժողովրդավարության ինստիտուցիոնալացումն է: Կոնսուժիատիվ ժողովրդավարության ինստիտուտները վարչական ներկայացուցչականության համամասնականությունը, տարածքային ինքնավարությունը, վոխսադարձ վետոն խոշնդրություն են քաղաքական իշխանության ապակոնալիդացիան՝ քաղաքական ծայրահեղականության նկատմամբ արդյունավետ պետական կառավարման պայմաններում²⁴:

Ամեն դեպքում՝ կոնսուժիատիվ ժողովրդավարությունը, որպես համաձայնության ժողովրդավարություն, ավելի շուտ պետք է դիտարկվի որպես պարտադրված որոշում՝ այլ ընդունելի տարբերակների բացակայության պատճառով:

Եվ հենց այստեղ է, որ Բրենդան Օ'Լիրի առաջարկած «պարտադրված կոնսուժիատիվություն»²⁵-ը ամենախսկական անփոխարինելի արժեքի է վերածվում այսպիսի հասարակություններում քաղաքական կայունության և իսկական ժողովրդավարություն հաստատելու համար:

ԱՍՓՈՓՈՒՄ

Ժամանակակից հասարակությունների, այդ թվում՝ հետխորհրդային, մեծ մասը, քազմական հասարակություններ են, որոնց բնութագրական են «հաստվածական տարբերություններ»: Այդ տարբերությունները կարող են ունենալ կրոնական, գաղափարական, լեզվական, տարածաշրջանային, ռասայական կամ երնիկական ծագում: Հավասարակշռության խախտումը որևէ էրնիկ խմբի օգտին անխուսափելիորեն հանգեցնում է էրնկրատիայի/սացիոնկրատիայի, այսինքն՝ մի էրնիկ խմբի գերիշխանության մյուս էրնիկ խմբերի նկատմամբ: Բազմական հասարակություններում գոյություն ունի քաղաքական կայունության և տարբեր սեզմենտների միջև հավասարակշռության ապահովման երկու ճանապարհ: առաջինը պետության դաշնային կառուցվածքն է, երկրորդը՝ Արենդ Լեյփհարթի կոնսուժիատիվ դեմոկրատիան:

²⁴ Նոյն տեղում:

²⁵ Coakley J., Adapting consociation to Northern Ireland Breaking patterns of conflict: the Irish state, the British dimension and the Northern Ireland conflict, University College Dublin, 2010, p.21.

Բանալի բառեր. կոնսոցիատիվ ժողովրդավարություն, բազմական հասարակություն, ֆեդերալիզմ, կոնֆլիկտ, հավասարակշություն, էքսուլարատիվ, սեգմենտներ:

КОНСОЦИАТИВНАЯ ДЕМОКРАТИЯ В МНОГОСОСТАВНЫХ ОБЩЕСТВАХ ЮЖНОГО КАВКАЗА

Айк Сукиасян

*Кандидат политических наук, доцент
старший научный сотрудник Института
философии, социологии и права НАН РА*

РЕЗЮМЕ

Большинство обществ, в том числе и большинство постсоветских обществ являются многосоставными, которым характерны “сегментарные различия”. Эти различия могут иметь религиозные, идеиные, языковые, расовые или этнические характеры. Нарушение баланса в пользу одной из этнических групп неизбежно приводит к этнократии/нациократии - к доминированию одной этнической группы над другими этническими группами. В многосоставных обществах существуют два пути для политической стабильности и обеспечения баланса между различными сегментами общества: первая - это федерализм, а вторая - консociативная демократия Арендта Лейпхарта.

Ключевые слова: консociативная демократия, многосоставная общество, федерализм, конфликт, равновесие, этнократия, сегменты.

CONSOCIATIONAL DEMOCRACY IN SOUTH CAUCASUS PLURIAL SOCIETIES

Hayk Sukiasyan

*Candidate of Political Science, Associate Professor,
Senior Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA*

SUMMARY

Most societies, including most post-Soviet societies, are plural, and they are characterized by “segment differences”. These differences may be religious, ideological, lingual regional, racial or ethnic characters. The imbalance in favor of one of the ethnic groups inevitably leads to ethnocracy/ natiocracy i.e. to the domination of one ethnic group over other ethnic groups. In plural societies there are two ways for political stability and for balance between different segments of

society: the first is federalism, and the second is consociational democracy of Arendt Lijphart.

Key words: consociational democracy, plural society, federalism, conflict, balance, technocracy, segments.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԻ ԻՆՔՆԻՇԽԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄԸ

Գուրգեն Սիմոնյան

Քաղաքական զիսությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի զիտաշխատող

«Նա, ով վերահսկում է անցյալը, վերահսկում է
ապագան»:

Նա, ով վերահսկում է ներկան,
վերահսկում է անցյալը»:

Չորջ Օրուել

Հայաստանի ինքնիշխանության վերականգնման քանալեցերորդ տարում էլ շարունակում է արդիական մնալ «Ո՞վ ենք մենք» և «Ու՞ր ենք զնում» հիմնարար հարցերը, որոնց պատասխանելուց հետո ազգը կարողանա և հաղթահարել տնտեսական ճգնաժամը, և վերականգնել ազգային մրցունակության բարձր մակարդակը, և շահադրդել երկրի քաղաքական ընտրանուն իրականացնել արդյունավետ ու իրավասու պետական կառավարում:

Սամուել Հանթինգտոնի կարծիքով՝ արտարին վտանգի դեպքում ազգային նույնականացման զգացումը կարող է մեծանալ կամ փորբանալ, փոխարենն այդ նույնականացման եռթյունն ավելի քիչ է ենթակա տատանումների: Գիտնականը կարծում էր, որ ինքնանույնականացումը բխում է յուրաքանչյուր մարդու բնական պահանջից. «Արդիիկ ունեն հարուստ, գրեթե անսահմանափակ ինքնանույնականացման աղբյուրներ: Դրանցից կարևորագույններն են՝

¹ Orwell George, Nineteen eighty-four: 1984. London, Secker & Warburg, 1949, p 219.